ՄՈՌԱՑՎԱԾ ԷՋ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայ պարբերական մամուլում, այլևայլ լուրերի շարքում, Չարենցի ստեղծագործությունների մասին հաղորդումներ սկսում են երևալ 1922—23 թթ.։ 1923 թ. հունվարին Բեյրութի «Արեգ» ամսագրում հրատարակվում են Սիմեոն Հակոբյանի հաղորդումը «Նորք» հանդեսի մասին (այդ թվում և հանդեսում՝ Չարենցի «Քամին» բանաստեղծության ու «Երկիր Նաիրի» վեպի հրատարակության մասին) և Արամ Երեմյանի «Եղիշե Չարենց և իր բանաստեղծությունները» հոդվածը։ Վերջին նյութը բավականին սխոլաստիկ է և այսօր դիտաճանաչողական արժեք չի ներկայացնում։

1923 թ. ապրիլին Արշակ Չոպանյանը Փարիզի «Ապագա» շաբաթաթերթում հաղորդում է հրապարակում հայրենիքում նոր լույս տեսած ամսագրերի մասին և այդ առթիվ տալիս է հակիրճ, բայց բավականին բովանդակալից բնութագիր Ե. Չարենցին։

1923 թ. սեպտեմբերին, Կահիրեի «Նոր շարժում» շաբաթաթերթում հրապարակվում է Վազգեն Շուշանյանի «Եղիշե Չարենցի մասին» հոդվածը։ Մեկ ամիս անց «Արեգ» ամսագրում հրապարակվում է Սիմեոն Հակոբյանի ծավալուն ուսումնասիրությունը՝ «Եղիշե Չարենց» վերտառությամբ, «Նոր բանաստեղծներ» ընդհանուր խորագրի ներքո։ 1924 թ. մարտին լույս է տեսնում Արշակ Չոպանյանի ուսումնասիրությունը Փարիզի «Ապագայում», որը 1977 թ. «Բանբեր Երևանի համալսարանի» № 3-ում վերահրատարակեց ակադեմիկոս Է. Ջրբաշյանը։ 1924 թ. նոյեմբեր—1925 թ. հունվար ամիսներին «Հայրենիքում» լույս է տեսնում Հակոբ Օշականի «Եղիշե Չարենց» ուսումնասիրությունը։

«Նոր շարժում» շաբաթաթերթում Վ. Շուշանյանի հրատարակածը, որքանով որ մեզ հայտնի է, Սփյուռքի պարբերական մամուլում հրապարակված առաջին լուրջ գրադատական նյութն է, որի մեջ փորձ է արվում ընդհանրացված գնահատականներ տալ Չարենցի վաստակին, մանավանդ որ թե՛ «Հայրենիք» ամսագրում տպագրված հոդվածը, թե՛ նույն ուղղության մամուլում, ինչպես նաև ուրիշ օրգաններում, հետագայում հրապարակված բազմաթիվ նյութերն ու հաղորդումները առավել կամ նվազ չափով, բայց գրեթե միշտ կրել են քաղաքական թելադրանքների աղդեցությունը։

«Նոր շարժումն» էլ «Հայրենիքի» ուղղության գրական, գեղարվեստական և գիտական շաբաթաթերթ էր։ Այնուամենայնիվ «Նոր շարժումը», որպես կանոն, ձգտում էր հնարավորին չափով ապաքաղաքական դիրքերի վրա մնալ։

Շաբաթաթերթի խմբագրապետ Գուրգեն Մխիթարյանին հաջողվում է որոշակի գիտական-գեղարվեստական մակարդակ ապահովել։ Ինքն արդեն զուսպ և ողջմիտ գեղեցկագիտական հայացքներ էր քարոզում, որոնցում ազդարարում էր գեղարվեստական ձևի և բովանդակության միասնությունը, թեպետ գրադատական գործընթացում ոչ հազվադեպ առավելությունը տալիս էր առաջինին՝ ի վնաս երկրորդի։

Շուշանյանի հարցադրումները, ինչպես պիտի տեսնի ընթերցողը, նկատելիորեն առարկայական են։ Հատկանշական է, որ հոդվածի հեղինակը հայտարարում է, թե «գաղութները և մայր երկրի ժողովուրդը իրար միացնող ամենազորավոր կապը անտարակույս որ գրականությունն է» և որպես օրինակ, ընթերցողներին ներկայացնում է «Հայաստանի գրողներեն ամենատաղանդավորը»[1]։ Հատկանշական է մանավանդ, որ Շուշանյանը գնահատում է նոր կյանքի, նոր գաղափարների, աշխատավորության, հեղափոխության և կոմունիզմի երգչին։

Առարկայականության կողքին, ասես, որոշակի հերթագայությամբ, արվում են դիտողություններ և քննադատություններ, որոնք, երբ համադրվում են քիչ վերը հաստատված մտքերի հետ, պարզապես դրանց հակապատկերն են ներկայացնում, բայց շատ թույլ, հարևանցի արտահայտված։ Ընթերցողին է թողնված լուծելու այդ թնջուկը. ո՞րն է ճիշտը՝ առարկայական դրույթները, թե՞ ենթակայական շուտասելուկները։

Ուշադրության արժանի է Շուշանյանի հոդվածի կապակցությամբ խմբագրության ծանուցումը, թե ուրիշ առիթով պիտի անդրադառնա Չարենցին։ Եվ, իրոք, անդրադառնում է։

---

1 Նոր շարժում, Ա տարի, 1923, պր. 28, էջ 430։

Գուրգեն Մխիթարյանը 1924 թ. հունվարի 12-ին, ամփոփելով նախորդ դրական տարին, գրում է. «Չարենց նոր մըն է, շունչ ու լեզու ունեցող բանաստեղծ մը, որ սակայն հրապարակագիր մըն ալ է միանգամայն, հռետորական և երբեմն անհեթեթ ձևերով, որ ընկերային հեղափոխությունը կերգե պատկերներով, ուր միտքը աշխատած է ավելի քան հոգին։ Աչքի նկարչություն է Չարենցի քերթողությունը, որ հոգնեցնելու աստիճան նույն գույները կը զործածե և նույն լարը կը զարնե շարունակ»2։

Դրույթի պարունակած դրական և բացասական գնահատականի համեմատությունը Շուշանյանի հոդվածի հետ ճիշտ վերջինի հակապատկերն է ցուցադրում։ Թերևս այս կացությունը լո՞ւյս է սփռում Շուշանյանի հոդվածի թնշուկի վրա։

Շուշանյանի հոդվածը, որքան որ մեզ հայտնի է, չի վերահրատարակվել, չի հիշատակվել թե՛ նրա հեղինակի, թե՛ Չարենցի մասին ստեղծված գրականության մեջ։ Անարդար է, որ սիյուռքահայ մամուլի՝ մեծ պոետի ստեղծագործությանը նվիրած առաջին լուրջ հոդվածը շարունակի մնալ որպես անծանոթ էջ։ Ուստի, այն հրատարակության ենք հանձնում ամբողջությամբ։

Կ. Լ. ԴԱՎԼԱԹՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Վերջին տարիներու քաղաքական դժբախտ դէպքերու դասաւորումով՝ նախկին ինքնաբաւ, ինքնուրոյն կեանք և մշակոյթ ստեղծելու ընդունակ թրքահայ զանգուածը կորսնցուց իր հայրենիքը, իր տնտեսութիւնը, կոտորակուեցաւ ու ստացաւ գաղութի հանգամանք։

Գաղութները այն չափով կը պահեն իրենց ազգային ուրոյն դիմագիծը որչափով որ սնունդ և ուժ կը ստանան մայր արմատէն՝ հայրենիքէն։

Գաղութները և մայր երկրի ժողովուրդը իրար միացնող ամենազօրաւոր կապը՝ անտարակոյս որ գրականութիւնն է։

Վերջին քաղաքացիական կռիւներէն յետոյ գուցէ և անոնց հետևանքով, Հայաստանը կը բոլորէ համեմատաբար խաղաղ կեանքի շրջան, ան ուժ և կենսունակութիւն կը ցուցնէ մասնաւորաբար գրական մարզին մէջ։

1915-էն ի վեր ընդհատուած գրական կեանքը, նորէն կը կենսաւորի հրապարակ կուգան նոր գրողներ ու կը ծնին նոր համբաւներ։

Գաղութային մեր բոլոր թերթերը և գրական պարբերականները մեզ չեն տար նոր կեանքի պատկերը՝ գոհացուցիչ կերպով։

Այդ ուղղութեամբ շատ փոքր և համեստ աշխատանք մը կատարելու փափաքով է որ կը փորձեմ «Նոր Շարժում»ի ընթերցողներուն ծանոթացնել Հայաստանի նոր գրողներէն ամէնէն տաղանդաւորը և աչքառուն՝ Եղիշէ Չարենցը։

* * *

Չարենցը շատ երիտասարդ է դեռ, միայն 27 տարու, կարսեցի. ան մասնակցած է Թուրքերու դէմ կամաւորական կռիւներուն, յետոյ Հանրապետութեան շրջանին եղած է գիւղական ուսուցիչ, ատեն մըն ալ Խորհրդային Հայաստանի ժողովրդական լուսաւորութեան կոմիսար (կրթական նախարար)։

Ան Գրականութիւն ընել սկսած է կանուխէն, բայց չէ ճանչցուած, առաջին անգամ զայն գնահատած է կովկասահայ տաղանդաւոր քննադատ՝ Ն. Աղբալեան և անկէ յետոյ է որ խորհրդային կարգերու գալուստով՝ կարծես թէ՝ արժէք և համբաւ ստացած է ան։

Հոս զարմանալու բան չկայ։ Չարենց նոր կեանքի, նոր գաղափարներու, աշխատաւորութեան և յեղափոխութեան և յետոյ կոմունիզմի երգիչն է. որպէսզի ան կարենար ճանչցուիլ և զարգանալ՝ հարկ էր համապատասխան շրջան և քաջալերող մթնոլորտ։

---

2 Նոր շարժում, Ա տարի, 1924, պր. 44—45, էջ 687։

Ան բեղուն հող գտաւ Խորհրդային Հայաստանի մէջ, իր անունին շուրջ բաւական խօսուեցաւ, նոյնիսկ ըսուեցաւ որ ան գրական նոր ուղղութեան մը ճամբան բացած է հետեւելով ուրիշ տաղանդաւոր բանաստեղծի մը՝ Վ. Տէրեանի հետքերուն։

Մեծ բանաստեղծներու համբաւը կը նմանի ձիւնագնդակի մը. կը բաւէ որ ձիւնագնդակը լերան կատարէն ձգուի՝ մինչև ստորոտ հասնիլը ան կը մեծնայ, կը լայնանայ։ Մենք բանաստեղծներ ունինք, օրինակ, Վարուժան և Թումանեան, որոնք նախապաշարում ստեղծած են ժողովուրդին մէջ, ասոնք բախտաւոր բանաստեղծներ են։ Այս կարգին կը պատկանին նաև Չարենց և զինք նախորդող Վ. Տէրեան, այն տարբերութեամբ որ, մինչդեռ առաջիններուն վայելած համբաւը իրենց արժէքին ուղիղ կը համեմատի, երկրորդիններունը՝ խոտոր։

Չարենց հրապարակ եկաւ յարմար ժամանակին. Թրքահայ մտաւորականութիւնը, որ վերազարթումի ճիգեր փորձեց—1920—22 շրջանին՝ վրիպեցաւ։ Ռուսահայ գրականութիւնը լճացման շրջան մը կ'ապրէր, հիները՝ Թումանեան, Իսահակեան և այլն ըսած էին իրենց ըսելիքը։ Միւս կողմէն—1915-էն յետոյ մարդկութիւնը կրած էր խոր ցնցումներ. ռուսական յեղափոխութիւնը հիմն ի վեր շրջած էր նախկին կարգերը, նախկին ճաշակները. դասակարգային կռիւները խոր ազդեցութիւն ձգած էին ծայրայեղ երիտասարդութեան վրայ ու կը փնտռուէր նոր երգ, նոր կեանքի խօսք։

Ահա այդ յատկանշական շրջանին էր որ յայտնուեցաւ այս կեանքով լեցուն, ուժով լեցուն բանաստեղծը ու հաստատ վճռականութեամբ, գրեթէ աղաղակելով իր երգը երգեց՝

«Կանգնեցէք, կանգնեցէք,
Բանուորներ բոլոր երկրի, միացէք»

Իր երգը, իրաւ, դեռ չունի ժամանակին մէջ տեսնելու հարկ եղած տարրերը, չունի կատարելութիւն, նրբութիւն, թէքնիքի տեսակէտէն շատ աղքատ է, բայց ունի վայրենի գեղեցկութիւն մը, անօրինակ մտերմութիւն և անկեղծութիւն, ու մանաւանդ ունի շարժում և հաւատամք։ Իր երգը ունի նաև ինքնատիպ շեշտ մը, պայթուցիկ, ցնցող, հարկադրող ուժ մը, որ կը պակուէր զինքը նախորդող ու իր սեռը մշակող Շուշանիկ Կուրղինեանին և Յակոբ Յակոբեանին։ Վերոյիշեալները չյաջողեցան, որովհետև նոր կեանքը երգեցին հին ոգիով, հին ձևերով, անոնք երբեք չունեցան իրենց նիւթին համապատասխան շունչ։ Չարենց ունի—ատոր համար ան տիրեց հրապարակին ու սիրուեցաւ։

Իմ կարծիքով ան մեծ արուեստագէտ մը չէ, ան միայն կեանքին բանաստեղծն է, ան կրցած է հասկնալ, խորապէս զգալ ժամանակը և իր պահանջները, մտիկ ըրած է նոր կեանքին ու իր լսածը մեղի կուտայ տանելի ձևի տակ, կարելի է ըսել տաղանդով։

Իր վերջին գործերէն մէկուն սկիզբը ան կըսէ.

... Իսկ ես—
Ձեր պօէտը խոնարհ—
Իսկ ես—
Ձեր պօետը լուսէ.
Այդ երգը ոսկեբառ
Ինչքան եմ ես լսել։

Չարենցի գրականութիւնը ձգտումնաւոր է և մանաւանդ ձգտումնաւոր. ան կեանքը երգած է—և երգած է կեանքին համար, հասկնալու համար ասիկա, մտիկ ընենք զինքը։ Խօսքը կեանքէն դուրս, կեանքէն վեր եղող, առօրեայ հոգերով հետաքրքրուիլ չուզող բանաստեղծութեան մասին է՝

Ինչ խեղճուկ էր այդ ծեր վանեցին...
Այդ երգը... երգը սրնգի...

Այդ երգը... աստղային, անծիր...
Այդ երգը—անոք, անգին...

Քեզ խրատ, պօէտ. այստեղից,
Օ երբեք չերդես անտեղի։
Լաւ է—կորչել անհետ
Լաւ է—մահը գեղին։

Թէ ուզեն—նուագիր «Ռանգի»
Թէ ուզեն—«Տասնչորս», «Տասնվեց»
Միայն թէ, պօէտ, կեանքից
Սրնգի պէս վեր չթեւեռ։

Անցնինք իր գրականութեան նիւթին։

Զարենց ընդհանրապէս իր նիւթը վերցուցած է ռուսական յեղափոխութենէն, դասակարգային պայքարներէն և անոնց հետեւանքը եղող խորհրդային հասարակական առօրեայ կեանքէն։ Ան երգած է օրինակի համար Հայաստանի խորհրդայնացումը, գիւղական կոմունիստական բջիջները, Հ.Ս.Խ.Հ.-ն, Երևանը, պոլշեվիկեան արտակարգ. դատարանը (չեկան) և տասնրեօթը տարեկան աղջիկ մը, որ կոմունիստական կոմիտէէ մը ներկայացուցիչ եկած է համագումարի մը։ Գեղեցիկ է այն քերթուածը, որ այդ աղջնակը կը ներկայացնէ—ահաւասիկ հատուածներ անկէ.

Եկել էր գիւղից,
Հազիւ ունենար նա տասնրեօթը տարի,
Գիւղի կոմբջիջը,
Ղրկել էր աղջկան
Համագումարի,

Աղջիկը շիկնել էր,
Կարծում եք սիրո՞ւց էր նրա կարմրութիւնը...
Օ, ոչ,
Նա լսում էր շրջի շշուկները,
Զգում էր, որ սիրտը ուռչում է,
Պայթում է։

Բանուոր էր խօսողը,
Ու խօսքը նման էր երգի,
Լսում էր աղջիկը եւ իր տաք կողերում
Զգում էր մի քաղցր գդգիռ։

Եւ ահա թէ բանաստեղծը ինչի կը նմանեցնէ բանուորին խօսքը.

Նման էր
Նոր
Օրորի...
Տեսնում էր՝
Հերկը,
Առուն...
Արեւը-լծուել էր արօրին
Արեւը-եզ ահագին—
Քաշում էր արօրը արեւածագի...

Զարենցի մօտ շատ յաճախ կարելի է հանդիպիլ ըստ երեւոյթին այլանդակ բայց խորքով տեղին և գեղեցիկ պատկերներու։ Վերի պատկերը խորհրդաւոր է և իմաստալից. ան կը նմանցնէ արեւածագը արօրի մը որ կեանքը կը հերկէ, կը բեղմնաւորէ ու Արեգակը—եզը ահագին—այդ արօրը կը քաշէ երկնքի կապոյտ տարածութիւններու մէջէն։

Զարենց այս բոլորէն յետոյ երգած է նաև իր հայրենիքը-մեր բառով-«իր արևի և փոշու երկիրը» «երկիր Նաիրին», «Հ.Ս.Խ.Հ.»-ն-իր բառերով-եր-

գած է յաջողութեամբ, նոյնիսկ աւելի նրբութեամբ և աւելի արուեստով։

Առանց յուղումի չէ կարելի կարդալ հետևեալ տողերը, որոնք լեցուն են ուժով եւ անօրինակ, զարմանալի սիրով.

Երգերս,
Նաիրի,
Քո շաֆրանով ներկած,
Քո արեւով,
Տօթով,
Փողոցների ցեխով-
Փռել եմ դաշտերիդ
Հեռուներին չարքաշ,
Սիրտս- զուռնա շինել,
Գալիքների դհոլ... (թմբուկ)

Երկիր, իմ արեւի եւ փոշու
Էսօր,
Ես,
Զուլուած ամէն ինչիդ՝
Ուզես-երգ եմ լուսէ,
Ուզես- կապուած մի շուն,
Ուզես- մժեղ չնչին...

Հատուած մըն ալ «Երեւան» վերնագրուած երկար քերթուածէն.

Գրաստի նման անլեզու
Քնել է Երեւանն ահա,
Գլուխը դրած Քանաքեռ,
Ոտքերը Մասիս է երկարել։
Երեւան, ես սիրում եմ քեզ,
Գորշաւազ շենքերդ քարէ,
Սիրում եմ տեսքդ զգաստ
Ինչպէս ճորտը սիրում է խանին,
Ինչպէս սէգ պարսիկը բարեպաշտ
Սիրում է մտնել բաղանիք...
Կարո՞ղ է արդեօք նեգրը սեւ
Հրաշքով սիպտակել յանկարծ։
Երեւան, ես էլ ի՞նչ ասեմ
Որ դու աւելին չցանկաս։

Լրացնելու համար իր գրականութեան նիւթի մասին եղած խօսքը, կարելի է ըսել որ ան երգած է յեղափոխութիւնը, կռիւը, նոր կեանքը՝ ժողովուրդի գիտակցութեան մէջ սէր արթնցնելու համար դէպի նոր կարգերը եւ Հայաստանի խորհրդայնացումէն վերջ, ան կ՝երգէ՝ խորացնելու համար կատարուած գործը։ Ան, անշուշտ, գիտէ որ նոր կարգերուն շատ խորթ է հայ աշխատաւոր գիւղացիութիւնը՝ երբ կըսէ.

Այս ի՞նչ է.
Օրերո՞ւմ
Մ։ եռ կայ,
Թէ՞
Գալիքն է երգերիս
Սաւառնակներ տուել։

Չարենցի գործը կարելի է բաժնել երեք մասի։ Առաջին այն մասը, որ գրուած է խաղաղ ժամանակի և ընդհանրապէս քնարական է, օրինակ, «Ծիածան» պոէմը, որտեղ խորապէս զգալի է Վ. Տէրեանի ազդեցութիւնը, երիտասարդ բանաստեղծը Տէրեանէն փոխ առած է ոճեր, ձեւեր, խօսքեր։ Իր այս գործը համեմատաբար տկար է, ինքնուրոյնութենէ զուրկ, բայց թէքնիքի տեսակէտէ աւելի ուժեղ քան ուրիշներ։

Երկրորդ մասը գրուած է ռուսական յեղափոխական շրջանին և նիւթը վերցուած է այդ շրջանէն, օրինակ, «Ամբոխը խելագարած»ը՝ հոս ալ Տէ-

ռեանէն հետքեր կան, իսկ երրորդ մասը որ գրուած է Հայաստանի խորհրդայնացումէն վերջ— օրինակ՝ «Պոեզո-Զուռնան» «Երեք Ռադիո»— աւելի ինքնուրոյն է ու զօրաւոր և Արուեստի կողմէ կատարեալ։

Կը թուի թէ այս վերջին պօէմը իր ամենայաջող գործն է. այնտեղ Չարենցը կը յայտնուի իր ունեցածին առաւելագոյնովը իրեն կը պակսի թէքնիքի կատարելութիւնը—այս թերութիւնը Չարենցի մէջ չափազանց շեշտուած է—հոս ալ իր արուեստը զուտ չէ, մաքուր չէ։

Վերոյիշեալ երկու թերութիւնները կը տարածուին լայնօրեն Չարենցի ամբողջ գրականութեան մէջ, ասոնցմէ զատ ան ուրիշ թերութիւններ ալ ունի որոնք իր գործին արժէքը չափազանց կը պզտիկցնեն, ներդաշնակութիւնը կը խանգարեն և որոշ դասակարգի մը համար անընթեռնելի կը դարձնեն զայն։

Նախ՝ Չարենց լաւ հայերէն չի գիտեր, յաճախ քերականական մեծ սխալներ ունի, շարայարական անճշտութիւններ որոնք իմաստը կը խափանեն, կը մթագնեն։ Տեղագրական և յատուկ անուններու գործածութիւնը երբեմն շատ տեղին են և գեղեցիկ, բայց յաճախ աւելորդ և ծանրաբեռնող։

Յետոյ օտար բառեր շատ կը գործածէ եւ ընդհանրապէս տգեղ, անիմաստ, օրինակ մասխարա, զուռնա, չայխանա, մեյդան, նէգր, դհոլ։

Իր ոճը տաք է, մտերմիկ, սրտի խօսող, մանաւանդ գունագեղ, ժողովրդական գանձերով հարուստ, բայց հոս ալ պակասութիւն կայ. ժողովրդականին և գրականին համադրութեան մէջ չափը չէ գիտցուած՝ այս թերութիւնը Թումանեանէն և Իսահակեանէն կուգայ։

Չարենց դիտողական ձիրք ունի, ուժեղ չէ այդ ձիրքը բայց իր մշակած նիւթին կը բաւէ։ Իր երևակայութիւնը բաւական զօրաւոր է, իր պատկերները զարմանալի գրաւիչ և գեղեցիկ են։ Որպէս օրինակ կ՚արտագրեմ «Երեւան» քերթուածէն առնուած յետագայ հատուածը։ Երեւան քաղաքն է որ կը խօսի բանաստեղծին հետ՝

Զանձրացել եմ, ասում է, կեանքից,
Դու գիտե՞ս, ասում է, Փարիզում,
Այնպէս լաւ է, խաղաղ եւ հանգիստ...
Փայլում է կօշիկի պես սրբած
Փարիզը լամպերի լոյսից....
Աւտո է այնտեղ արապան,
Փողոցի լապտերը՝ լուսին։
Շարել է իրա զիստերին
Կամուրջները որպես օղեր...
Ախ, գիտե՞ս նա կիրճ է հիսթերիկ,
Իսկ ես—գաղթական Շողեր։
Հա՞սկանում ես, ասում է, Չարենց
Ես ուզում եմ նրա պէս լինեմ։

Նոյն քերթուածէն ուրիշ հատուած մը.

— Ախ լուսինն ահա վերեւում,
Արախչինն արծաթ մազերին,
Կիսաքուն աստղերի քէֆում
Հեզանազ պարում է «էնզելիա»։

Չարենցի ուրիշ մէկ թերութիւնն է, իր տեսակ մը ռոմանթիզմը՝ իրերը չափազանցուած գոյներով տեսնելու հանգամանքը. ասիկա արդիւնք է իր ծայրայեղ խառնուածքին։

Իսկ ինչ որ ցաւալի է դիտել տալ, իր ամբողջ գործին մէջ, սեւ գիծի մը նման երկարող բան մը կայ, որ յանկարծ անկիւնէ մը կը ցատկէ ու ընթերցումին ամբողջ տպաւորութիւնը կը խանգարէ։ Ես կը վարանիմ այդ բանը անուանել իր իսկական բառով, որպէս օրինակ, ես ամբողջութեամբ կ՚արտագրեմ 1922-ին Մոսկուա տպուած իր «Պոեզոզուռնա» գրքոյկին վերջընթեր քերթուածը։ Խօսքը բանուորի մասին է.

Հասկանում եք՝ եկաւ քոսոտ,
Քորելով մէջքը վաստակած
Ու բերեց աչքերում մի բոսոր
Արնածոր դրօշ յաղթական,
Երեկ,
Նա
Նստում էր մեյդան
Երկաթ էր ծեծում.
Էսօր
Նա
Արիւն է երթ անում
Թափելով ժահրը կծու։
Եւ
Գիտէք,
Թափով թիկնեղ
Երբ հասնի նա Հինդ ու Չիլի—
Պիտի բիւր Յիսուսներ ծնեն—
Նրա մէկ, նրա մէկ ոչիլից։

Բայց այս բոլոր թերութիւններով հանդերձ Չարենցը գրաւիչ բանաստեղծ է, ան դեռ իր վերջին խօսքը չէ ըսած, ընդհակառակը ան իր առաջին քայլերով ուշագրաւ և կարեւոր գրականութիւն մը տուաւ որ անշուշտ հետզհետէ կը զարգանայ ու կը սրբուի իր անհարթութիւններէն։

Չարենցի հոգին լայն է ու տիեզերքը ընդգրկող, իր երգերուն շարժիչ ազդակը՝ այլասիրութիւնը. մարդկայնութիւնն է և ճիշտ անոր համար է որ ան կը պոռայ բարձր ու յաղթական.

Ահա թե ինչու է երգս յաղթական,
Ահա թե ինչու իմ ձայնս այսօր
Ցավերժի նման յամառ եւ հաստատ։

Եւ ան այս ձայնով է որ կը կանչէ բոլոր անոնք որ աշխատիլ գիտեն.

Հեյ... հեռու, մօտիկ,
Հանքահորերում,
Լայն ստեպներում և անտառներում,
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում,
Երկաթի, բրօնզի, հողի եւ հանքի
Երգով օրօրուող իմ բիւր եղբայրներ։

Ու անոնց կ'ուղղէ իր նոր խօսքը, անոնց կ'երգէ նոր կեանքի երգը՝ հաւատքով, քաղցրութեամբ և զօրութեամբ։

Այդ երգը որ արդէն իսկ կը թարգմանուի կովկասեան լեզուներով, և որ կը հրամցուի Մոսկուայի ռուս հասարակութեան՝ միայն պատիւ կը բերէ բանաստեղծին որ սիրուելու և յարգուելու արժանի է իր ժողովուրդին կողմէն՝ անկախ իր քաղաքական դաւանանքէն[1]։

ՎԱՉԳԵՆ Գ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

Փարիզ

Նոր Շարժում, Կահիրե, Ա տարի, 15 սեպտեմբեր, 1923, պր. 28, էջ 430—435։

---

1 Չարենցի մասին պիտի անդրադառնանք ուրիշ առթիւ (ծանուցումը «Նոր Շարժումի» խմբ.)։